ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Էլ. հասցե sovxoz444@mail.ru

N 01-72

<<29>> 04 2021թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ

Պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից ընդունված 2021 թվականի ապրիլ ամսվա որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար՝ Գ. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ոսկեհատ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 7-Ա

22 ապրիլի 2021թ.

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի երկրորդ գլխի դրույթներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ , 5-րդ կետերով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հիմք ընդունելով համայնքի բնակիչ Լիլիթ Ավագյանի դիմումը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել օրինական Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական համայնքի բնակիչ Լիլիթ Սերյոժայի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող Ոսկեհատ համայնքի 17 փողոցի 22 բնակելի տունը և կից կառուցված ինքնակամ շինությունների /արտաքին մակերես՝ 122.3 ք/մ բնակելի տուն, 17.2ք/մ նկուղ, 3.5 ք/մ աստիճան, 37.7 ք/մ ԲՊ, 54.3 ք/մ ավտոտնակ, 3.1 ք/մ զուգարան, և 1.9 ք/մ պարիսպ/ սեփականության իրավունքը:
2.Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը սահմանվում է 408000 /չորս հարյուր ութ հազար / ՀՀ դրամ: 3.Բնակելի տանը տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի 17 փողոցի 22 բնակելի տուն:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին գրանցել սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված շինության նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ

20 21թ.
գ.Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ոսկեհատ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 8-Ա

28 ապրիլի 2021թ,

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի երկրորդ գլխի դրույթներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ , 5-րդ կետերով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հիմք ընդունելով համայնքի բնակիչ Թամարա Տեր-Խաչատրյանի 2021 թվականի ապրիլի 27-ի դիմումը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել օրինական Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական համայնքի բնակիչ Թամարա Տեր-Խաչատրյանի սեփականության իրավունքով պատկանող Ոսկեհատ համայնքի Կոմիտասի փողոցի 14 բնակելի տունը և կից կառուցված ինքնակամ շինությունների /արտաքին մակերես՝ 1.4 ք/մ պարիսպ/ սեփականության իրավունքը:
2.Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը սահմանվում է 2408 /երկու հազար չորս հարյուր ութ / ՀՀ դրամ: 3.Բնակելի տանը տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի Կոմիտասի փողոցի 14 բնակելի տուն:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին գրանցել սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված շինության նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ

20 21թ. ապրիլի 28
գ.Ոսկեհատ